

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

----- 2020 թվականի N ----- -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆԻՍԻ 29-Ի N 993-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածով, «Անասնաբուժության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 29-ի «Սպանդանոցներում գյուղատնտեսական կենդանիների սպանդի կազմակերպման կարգը սահմանելու մասին» N 993-Ն որոշմամբ հաստատված հավելվածում (այսուհետ՝ Հավելված) կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումները՝

1) Հավելվածի 3-րդ կետում «կազմում» բառից հետո լրացնել «,ինչպես նաև շարժական» բառերը.

2) Հավելվածի 18-րդ կետում «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին)» բառերով.

3) Հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3-րդ գլխով.

«III. ՇԱՐԺԱԿԱՆ ՍՊԱՆԴԱՆՈՑՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ

35. Շարժական սպանդանոցները կենդանիների մորթ իրականացնելու նպատակով տեղակայվում են համայնքի ղեկավարի կողմից հատկացված համապատասխան վայրում:

36. Շարժական սպանդանոցի անձնակազմը բաղկացած է՝

- 1) մորթ իրականացնող մասնագետից.
- 2) անասնաբույժից.
- 3) վարորդ-մասնագետի օգնականից:

37. Շարժական սպանդանոցը հատկացված վայրում տեղակայվելուց հետո տրանսպորտային միջոցին կից պետք է կահավորի նախասպանդային գոտի, որից հետո իրականացնի նախասպանդային զննում՝ սույն հավելվածի 11.1-ին կետի համաձայն:

38. Շարժական սպանդանոցում հետսպանդային զննումն իրականացվում է սույն հավելվածի 33. 1-ին կետի համաձայն:

39. Շարժական սպանդանոցը պետք է հագեցված լինի՝

- 1) Կենդանու քննեցման հատվածով.
- 2) Կենդանու շննեցման գործիքներով.
- 3) Բեռնաբարցման-իջեցման հարթակով.
- 4) Կրծքավանդակի կտրման սղոցով.
- 5) Կենդանու գլխի ֆիքսման շրջանակով.
- 6) Փականային ջրային ատրճանակով.
- 7) Սպանդի գործիքերի վարակազերծման սարքով.
- 8) Ձեռքերի լվացարանով.
- 9) Ջրի տարայով՝ տաքացուցիչով.
- 10) Մսեղիքի կշեռքով.
- 11) Մսեղիքի կտրման երկայնական սղոցով.
- 12) Շարժասայլակ տարայով՝ 100լ տարողությամբ.
- 13) Բեռնաբարձման մեխանիզմով.
- 14) Առաձգական շերտավարագույրով.
- 15) Շարժասայլակ տարայով՝ ներքին օրգանների հավաքման համար.
- 16) Նախասպանդային գոտու կազմակերպման համար ցանկապատերով և ամրակներով:

40. Շարժական սպանդանոցի հավաքածուն ներառում է՝

- 1) Մորթի համար նախատեսված դանակներ.
- 2) Դանակի սրիչ.
- 3) Դանակի պատյան.
- 4) Պլաստմասե արկղ.
- 5) Անջրաթափանց գոգնոցներ.
- 6) Ախտահանիչ գորգ.
- 7) Կախովի հոսքագիծ.
- 8) Կախիչ.
- 9) Սարքավորման կարգավորիչ լծակ.
- 10) Գնդիկավոր առանցքակալով կախիչ.
- 11) Չժանգոտվող պողպատյա կեռիկներ.
- 12) Ջրի պոմպ.
- 13) Հոսքայնության ուղղորդիչ.
- 14) Արկղերի համար նախատեսված սայլակ.
- 15) Շարժասայլակ տարայով՝ 200լ տարողությամբ.
- 16) Մխոցավոր օդամղիչ.

17) Միջին ջերմաստիճանային Սպլիտ համակարգ.

18) Թափոնների հավաքման տարա.

19) Սառնարանային խցիկ.

20)Ջրի տարա.

21) Էլեկտրոգեներատոր.

22)Շարժական պոմպային ախտահանիչ ցողարկող գործիքով:

41. Շարժական սպանդանոցը պետք է ապահովված լինի անասնաբուժական լաբորատորիայով՝ հազեցված անհրաժեշտ սարքավորումներով:

42. Շարժական սպանդանոցում սպանդի գործընթացը կազմակերպվում է Տեսչական մարմնի եզրակացությամբ և հսկողությամբ:

43. Եզրակացությունը ստանալուց հետո շարժական սպանդանոցը գրանցվում է Տեսչական մարմնի կողմից վարվող «Սպանդանոցների կառավարում» միասնական էլեկտրոնային հարթակում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 21-ի N 1499-Ն որոշմամբ սահմանված N 5 ձևի անասնաբուժական վկայականի տրամադրման և շրջանառության նպատակով:»: